№ 12 Յունուարի 31 (Փետրուարի 12) 1879 Յունուարի 31 (Փետրուարի 12) № 12

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւոյ՝ 6 րուբլի։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Բաժանորդագրութիւնը գրեմամ են ուղղել
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողին 3 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մէթէ սա ինտելիգենցիա է։—Ներքին տեսութիւն. Քութայիսի մասին նամակ խմբագրին. Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն. Ֆրանսիա։—Խառն լուրեր։—Մշակի հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկագիր։—Բանասիրական. Մատենագրութիւն.

ՄԻԹԷ ՍԱ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ Է

Ինչպէս չը յարձակվես մեր ինտելիգենցիայի դէմ, ինչպէս չը մեղադրես նրան անխնայ, երբ նա իր մտաւոր զարգացմամբ հազիւ թէ բարձր է կանգնած որ և է տաճկական գիւղացի պառաւական գաւառական աշակերտների զարգացումից։

Մենք երկար դատողութիւններ անելու չենք, այլ կը բերենք այստեղ մի քանի խօսակցութիւններ, որոնք լսվում են այժմ Թիֆլիսի հայոց ինտելիգենցիայի, բարձր ուսում ստացածների բերանից։

Նորերումս մի բարձր ուսում ստացածին հարցնում են մի մտաւոր շրջանում, ինչի՞ նա «Մշակը» չէ կարդում։ Ահա ահա ինչ է պատասխանում մեր ինտելիգենցիային պատկանող երիտասարդը՝—ես «Մշակը» չեմ կարդում, որովհետև Արծրունուն ատում եմ։

Այս տեսակ բաներ, ճշմարիտ է, կարելի է գրել միայն ֆելիետոնում, բայց այդ խօսքը այնքան նշանաւոր է, այնքան յատկանիշ է իր անհեթեթ անմտութեամբ Թիֆլիսեցի հայ բարձր ուսում ստացածի բերանում, որ մենք հարկաւոր համարեցինք յիշել նրան առաջնորդող յօդուածում։

Հարցնող լինի նրան՝ եթէ նա ատում է խմբագրին, մի՞թէ այդ անհրաժեշտ ատելութիւնը պէտք է արգելի նրան կարդալ լրագրի մէջ տպված ուրիշ յօդուածներ, ներքին և արտաքին թղթակցութիւններ, հայոց ազգի, իր հայրենակիցների կեանքի հետ ծանօթանալու համար։ Մի մարդու ատելով կարելի է, գիտենք, չը կարդալ նրա գրչից դուրս եկած յօդուածները, բայց մի՞թէ դէպի այս կամ այն անձը ունեցած ատելութեան պատճառով պէտք է անտես առնել իր հայրենակիցների կեանքը, պէտք է զանց առնել իր ազգի կենսական խնդիրների և պահանջների ուսումնասիրութիւնը։

Ահա բարձրագոյն ուսում ստացածների լոգիկան։

Մի ուրիշ շրջանում նորերումս մի Թիֆլիսեցի բարձր ուսում ստացած հայը հաւատացնում էր որ հայը երբէք ոչինչ չէ կարող սովորել հայոց լրագրից։

Ինչ զարմանք և երևի աշխարհիս երեսին բացառութիւն կազմող մի ազգ է, այդ հայոց ազգը։ Ռուսը կարող է ռուս լրագրից բան սովորել, ֆրանսիացին ֆրանսիական լրագրից, գերմանացին գերմանական լրագրից, իսպանացին իսպանական լրագրից,—միայն հայը ոչինչ չէ կարող սովորել հայոց լրագրի ընթերցանութիւնից։ Այդ երևոյթը բացատրվում է շատ պարզ կերպով՝ հայը երբէք մի ուրիշ հային իրանից մի մազի չափ անգամ բարձր չի դասի։ Ռուսը կարող է յանձն առնել ռուսների համար լրագիր հրատարակել և նրանց մի բան սովորեցնել, ֆրանսիացին կարող է իր հայրենակիցներին սովորեցնել, և այլն,—բայց հայը հային երբէք....

Վերջապէս մի երրորդ օրինակ մեր Թիֆլիսեցի հայ բարձր ուսում ստացածների անմտութեան։ Նորերումս մի բարձր ուսում ստացածը մի խօսակցութեան մէջ հրապարակապէս յայտնում էր որ Թիֆլիսեցի հայը ոչինչ բարոյական կապ չէ կարող ունենալ Կ. Պօլսի, Զմիւռնիայի կամ Վանի հայի հետ, և որ Թիֆլիսում ծնվելով ոչ թէ միայն այդ և այլ տեղական ազգութիւններին պատկանող ներկայացուցիչները, բայց մեր քաղաքում ծնվելով սովորաբար ֆրանսիացիներ կամ գերմանացիներ աւելի մօտ են Թիֆլիսեցի հային, թէ նրանց, թէ ռուսական և թէ բարոյական շահերի կողմից, քան թէ Թիւրքիայի հայը։

Այդ nec plus ultra անմտութեանը, մենք այլ ևս ոչինչ չունենք պատասխանելու։ Ապշած, շփոթված, շուարած,— մարդու ձեռները ընկնում են, լեզուն այլ ևս չէ շարժվում բերանի մէջ, ուղեղը դադարում է գործելուց, մտածելուց....

Հարցնող լինի՝ ի՞նչ օգուտ է բերում հային բարձրագոյն ուսումը, երբ փորձից տեսնում ենք որ բարձրագոյն ուսումը ստանալուց յետոյ, հայը աւելի յիմարանում է, աւելի բթանում է։

Իսկ ոչ. մենք կարծում ենք որ այդ կարող է պատահել միայն Թիֆլիսեցի հայի հետ.... Թիֆլիսեցի հայը մի առանձին ազգ է, մի առանձին ցեղ է. նա հայ չէ զգում....

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Die Armenier. — Franz v. Löher (Wiener Abendpost. № 255—258 Beilage 1876)—ՀԱՅԵՐ. Հեղ. ՖՐԱՆՑ ՖՕՆ ԼՕՀԷՐ

II

[illegible]